

ՀՏԴ : 378(470)

DOI: 10.54503/0135-0536-2026.2-3

ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 210-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՈՇՈՐ ԿԵՆՏՐՈՆԸ.
ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ*

ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ

Քանալի բառեր՝ Մոսկվա, Լազարյաններ, Լազարյան ճեմարան, լեզու, սան, ուսում, առարկա:

Ամփոփում

Հայ իրականության մեջ խոշոր դերակատարություն ունեցած կրթական հաստատություններից է Մոսկվայի Լազարյան ճեմարանը: Լազարյան (Եղիազարյան) տոհմի կողմից հիմնադրվելով և գործելով օտար երկրում՝ այն անգնահատելի ծառայություն է մատուցել հայ ժողովրդին: Կրթօջախը դռները բացել է 1815 թվականին, որն էլ պաշտոնապես համարվում է նրա հիմնադրման թվականը: Հանրակրթական առարկաների հետ այս հաստատությունում դասավանդվել են նաև օտար լեզուներ: Ճեմարանում ուսանել են տարբեր ազգերի երեխաներ: Այն դիմորդներ է պատրաստել համալսարան ընդունվելու համար: Նրա շրջանավարտները դարձել են ամենատարբեր բնագավառների մասնագետներ՝ հայ աշխարհիկ ու հոգևոր դպրոցների ուսուցիչներ, Հայ եկեղեցու սպասավորներ: Ունեցել է ընդգծված արևելագիտական բնույթ, տվել է թարգմանիչներ, դիվանագիտության բնագավառի աշխատողներ, արևելյան լեզուների ուսուցիչներ: Տարբեր ժամանակներում ճեմարանում դասավանդել են հայ (և ոչ միայն) մշակույթի երախտավորներ: Այդպիսի երախտավորներ են դարձել նաև կրթօջախի շրջանավարտների մի մասը: Ուսումնական հաստատությունը դասվել է պետական առաջին աստիճանի դպրոցների՝ լիցեյների կարգը: Լազարյան ճեմարանում ծավալվել է նաև հրատարակչական գործունեություն. 13 լեզվով տպագրվել է տարաբնույթ գրականություն: Ունեցել է թատրոն: Որոշակի դեր է խաղացել նոր գրական հայերենի՝ աշխարհաբարի ձևավորման ու հաղթանակի գործում: Տասնամյակներ շարունակ այստեղ են այցելել հայ, ռուս և օտարազգի բազմաթիվ անվանի դեմքեր: Լազարյան

* Ներկայացվել է 22. IV. 2026 թ., գրախոսվել է 07. V. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

ճեմարանի կրթական գործունեությունը ավարտվել է 1917-ին: Հետագա տարիներին նշված կառույցի շենքում տեղակայվել են մի շարք հաստատություններ: Հայաստանի անկախացումից (1991) հետո այստեղ է գործում Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը:

1920-ականների սկզբներին ճեմարանի գրադարանը հանձնվել է Խորհրդային Հայաստանին և դարձել Ալեքսանդր Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի (ներկայիս՝ Հայաստանի ազգային գրադարան) հիմնարար ֆոնդերից մեկը: Խորհրդային Հայաստան է տեղափոխվել նաև ճեմարանին պատկանող «Լազարյան ավետարան»-ը:

Նախաբան

Հայ ժողովրդի կյանքում իր ունեցած վիթխարի վաստակով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Մոսկվայի Լազարյան ճեմարանը: Այն մշտապես եղել է հայ և ռուսաստանցի հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այս հաստատության մասին գրվել են բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ՝ հոդված, մենագրություն և այլն: Նշվել է նաև ԽՍՀՄ արևելագիտության ձևավորման գործում կրթօջախի ունեցած հսկայական դերը: Որոշ հետազոտողներ կրթական հաստատությունն ուսումնասիրել են ամբողջության մեջ, ոմանք էլ՝ նրա գործունեության առանձին ուղղություններ՝ կրթական, հրատարակչական, գրադարանային, մշակութային և այլն:

Լազարյան ճեմարանը եղել է հայագիտական ու արևելագիտական ուղղվածությամբ կրթագիտական խոշոր կենտրոն, հայ մտավոր շտեմարան է փոխանցել ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ, արևելյան լեզվաբանության, Արևելքի ու Անդրկովկասի պատմության, մշակույթի վերաբերյալ տարբեր հետազոտություններ:

Հիմնադրումը

Լազարյան ճեմարանը հիմնադրվել է 1815 թ. Մոսկվայում հայկական Լազարյան տոհմի կողմից, որի անունով էլ հետագայում կոչվել է:

1749 թ. Մոսկվայում հաստատված Լազարյանները ազնիվ վարքի ու ջանադիր, բոլորանվեր գործի շնորհիվ վայելում էին թե՛ ռուսական կայսրության և թե՛ այլ տերությունների մեծազդեցիկ անձանց ու գահակալների համակրանքը, վստահությունը և գնահատանքը: Նյութական մեծ կարողություններ ունեցող ազգանվեր այս տոհմը տարաբնույթ բարեգործություններով առնչվում էր նաև իր ազգին և նրան օգուտ բերող ձեռնարկներին: Սակայն հայ ժողովրդի բազմահազարամյա պատմության մեջ Լազարյան տոհմի անունը հավերժացավ հենց վերը հիշատակված կրթակառույցի շնորհիվ, որ չնայած գործեց մայր հայրենիքից հեռու, բայց իր ողջ ներուժով ծառայեց հայության մտավոր զարգացմանը:

Ազգաշեն այս տոհմից սերող Հովհաննես Լազարի Լազարյանը միակ արու գավակին կորցնելուց հետո՝ իր մահվանից (1801 թ.) առաջ, բավականին խոշոր գումար է կտակում փոքր եղբորը՝ Հովակիմին, որպեսզի վերջինս իրագործի իր վաղեմի փափագը՝ դպրոց բացի հայ մանուկների համար: Հովա-

կիմը եղբոր և իր ցանկությունը կատարելու համար, մի որոշ գումար էլ իր կողմից ավելացնելով, լծվում է ազգանվեր այդ գործին: 1812 թվականից սկսվում է կրթարանի շենքի կառուցումը, որն ավարտվում է 1815-ին: Գործունեությունը հայակառույց այս օջախն սկսում է նույն տարվա մայիսի 14-ից:



Լազարյան ճեմարան, 1838 թ.

Առաջին տեսուչը Լազարյանների գրագիր, աստրախանցի դպիր Գևորգ Ալամդարյանն էր, որին 1814-ին Հարություն անունով ձեռնադրել էին քահանա՝ ի հիշատակ Հովակիմ Լազարյանի 22-ամյա որդու, առաջին հոգաբարձուն տոհմի ներկայացուցիչ և շինարարությունն իրագործող Հովակիմ Լազարյանն էր, օգնականը՝ եղբայրը՝ Խաչատուրը:

Կրթական գործունեությունը

Լազարյան կրթական հաստատությունը սկզբում տարրական տիպի մասնավոր դպրոց էր, կոչվում էր Հայկական Լազարյան ուսումնարան: Այստեղ սովորում էին միայն Լազարյան որդեգիրները: Ճեմարան ընդունվում էին տարբեր ազգերի 10–14 տարեկան երեխաներ, հիմնականում հայեր և ռուսներ: Ուսման տևողությունը տատանվում էր 5-ից 10 տարվա սահմաններում: Քննությունները տեղի էին ունենում հունվարին ու հունիսին: Այս օջախը դիմորդներ էր պատրաստում համալսարան ընդունվելու համար, ինչպես նաև պաշտոնյաներ ու հայկական դպրոցների ուսուցիչներ. ճեմարանավարտները կարող էին աշխատանքի անցնել ամենատարբեր բնագավառներում՝ արքունական, ռազմական, կրոնական, մանկավարժական և այլն:

1820-ական թվականների ուսումնական ծրագրով ճեմարանը համապատասխանեցվում է ռուսական գիմնազիաների մակարդակին: Հանրակրթական առարկաների հետ դասավանդվում են ռուսերեն, հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, նաև պարսկերեն, թուրքերեն, արաբերեն: 1827-ին կրթակառույցը վերանվանվում է Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ (հայկական աղբյուրներում ավանդաբար կոչվում է Լազարյան ճեմարան), անցնում ժողովրդական կրթության նախարարության ենթակայությանը: 1828-ից կոչվում

է Լազարյան հայկական ճեմարան արևելյան լեզուների: 1830-ական թվականներին ստանում է 2-րդ աստիճանի ուսումնական-հաստատության իրավունք՝ 5-ամյա ուսուցմամբ: Հայ եկեղեցու սպասավորներ և հոգևոր դպրոցների ուսուցիչներ պատրաստելու նպատակով 1841-ին կրթավայրին կից բացվում է հոգևոր բաժին:

1848-ի կանոնադրությամբ ճեմարանը դասվում է պետական առաջին աստիճանի դպրոցների՝ լիցեյների կարգը՝ 8-ամյա ուսուցմամբ՝ գիմնազիական 6 և լիցեյական 2 դասարաններով: Վերջին 2 դասարաններում ուսուցանվում են արևելյան լեզուներ: 1851-ին բացվում է նախապատրաստական բաժին, որի ուսումնավարտները կարող էին ընդունվել ճեմարանի գիմնազիական բաժին: Ուսումնական ծրագրի մեջ մտնող մեկ պարտադիր արևելյան լեզվից բացի՝ հայերը, ինչպես և վրացիներն ու կովկասյան այլ ազգությունների պատկանող սաները, սովորում էին նաև իրենց մայրենի լեզուն:

1872 թ. ընդունված նոր կանոնադրությամբ՝ ճեմարանն ստանում է ընդգծված արևելագիտական բնույթ. պատրաստվում են թարգմանիչներ, դիվանագիտության բնագավառի աշխատողներ, արևելյան լեզուների ուսուցիչներ: Այդ կանոնադրությամբ կրթական օջախը, փաստորեն, բաղկացած էր երկու ուսումնական հաստատություններից՝ դասական գիմնազիայից և եռամյա ուսուցմամբ մասնագիտական դասարաններից (արևելյան լեզուների ֆակուլտետ), որ ստեղծվել էին լիցեյական դասարանների հիման վրա: Մասնագիտական դասարանների բացումով արևելագիտությունը ճեմարանում զարգացման նոր փուլ է թևակոխում. արևելյան լեզուների ֆակուլտետն իր տված կրթության մակարդակով համապատասխանում է բարձրագույն ուսումնական հաստատություններին:

Թեև ուսուցման լեզուն ռուսերենն էր և մեծ տեղ էր հատկացվում արևելագիտական առարկաներին, այդուհանդերձ, Լազարյան կրթակենտրոնը իր գոյության ընթացքում պահպանում է հայկական շունչը. հայերեն են ավանդվել հայագիտական առարկաները, հայերից է բաղկացած եղել ուսուցչադասախոսական կազմի և սաների մեծամասնությունը, հիմնականում հայերի ձեռքում է գտնվել ղեկավարությունը՝ տնօրինությունը ու հոգաբարձությունը:

Նշանավոր դասախոսները

Տարբեր ժամանակներում ճեմարանի հարկի ներքո ազգանվեր կրթական աշխատանք են կատարել Հարություն Ալամդարյանը, Միքայել Նալբանդյանը, Ստեփանոս Նազարյանցը, Մկրտիչ Էմինը, Միքայել Սալլանթյանը, Սմբատ Շահագիզը, Մսեր Մսերյանը, Նիկոլայ Ռիբկինը, Տոր-Նել Լանգեն, Վասիլի Միլլերը և ուրիշներ. մի մասը՝ ճեմարանի նախկին ուսումնառուներ:

Կրթակառույցի համար նշանակալի է եղել պատմության դասախոս, 1861–1881 թթ.՝ տեսչի, 1881–1897 թթ. վերատեսչի պաշտոնը վարած Գևորգ Քանանյանի նպատակասլաց ու ջանադիր աշխատանքը: Այս նվիրյալ ղեկավարի օրոք ճեմարանը վերածվել է բարձրագույն դպրոցի: Նրա նախաձեռնությամբ կառուցվել են մարմնամարզական դահլիճ, ննջարաններ՝ գիշերօթիկ սաների, ինչպես և առանձին մասնաշենք՝ մասնագիտական դասարանների ու գրադարանի համար: 1891-ին ճեմարանի պատվավոր հոգաբարձու Սիմոն Դավիթի

Աբամելիք-Լազարյանի ծախսով Քանանյանը հրատարակել է «Семидесятилетие Лазаревского института восточных языков» գիրքը:

Ուսանողությունը

Ճեմարանում Լազարյանների և այլ նվիրատուների ու բարերարների աջակցությամբ, նաև իրենց հաշվին կրթություն են ստացել հարյուրավոր, եթե ոչ հազարից ավել պատանիներ ու երիտասարդներ: Նրանց մի զգալի մասը հետագայում մնայուն տեղ է գրավել հայ և ռուս գրական, հասարակական, կրթական ու մշակութային բնագավառներում: Այստեղ են գիտելիքների իրենց նախնական պաշարը կուտակել բանաստեղծներ Ռափայել Պատկանյանը, Գևորգ Դոդոխյանը, Սմբատ Շահագիրը, Հովհաննես Հովհաննիսյանը, Վահան Տերյանը, մանկավարժներ Գևորգ Աբովյանը, Սեդրակ Մանդինյանը, Առաքել Բահաթրյանը, նկարիչներ Վարդգես Սուրենյանցը, Եղիշե Թադևոսյանը, Հովհաննես Պատկանյանը, դերասաններ, թատերագիրներ, թատերական գործիչներ Սարգիս Տիգրանյանը, Ռուբեն Սիմոնովը, Էմին Տեր-Գրիգորյանը, Գևորգ Պետրոսյանը, Գևորգ Զուբարը, գիտնականներ, թարգմանիչներ, հրապարակախոսներ, հասարակական գործիչներ Քերովբե Պատկանյանը, Մկրտիչ Էմինը, Յուլյա Խանզադյանը, Պողոս Մակինցյանը, Մկրտիչ Բարխուդարյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Գրիգոր Խալաթյանցը, Համազասպ Համբարձումյանը, Գրիգոր Զանշյանը, Մինաս Բերբերյանը, Գևորգ Ախվերդյանը, պետական-քաղաքական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը և այլք:

Հայաստանում այս օջախում են կրթություն ստացել նաև ռուս մշակույթի մի շարք դեմքեր՝ հայագետ Յուրի Վեսելովսկին, թատերական գործիչներ Կոստանդին Ստանիսլավսկին (Կոստանդին Ալեքսեն), Ֆեոդոր Կորշը, պատմաբան, գրող Սերգեյ Գլինկան և ուրիշներ: Լազարյան ճեմարանում արևելյան լեզուներ ուսանած Վասիլի Գորդլևսկին և Ազաֆանգել Կրիմսկին դարձել են թուրքերենի ու արաբերենի դասախոսներ, համարվել ժամանակի լավագույն արևելագետները:

Հրապարակական գործունեությունը

1829 թվականին Լազարյանների ժառանգներ Հովհաննես և Խաչատուր Հովակիմյանները ճեմարանին կից հիմնում են տպարան՝ Պետերբուրգից բերելով դեռևս 1811-ին Հովսեփ քահանա Հովհաննիսյանի կողմից այնտեղ հիմնադրված տպարանը: Ճեմարանական տպագրատան առաջին հրատարակություններից է կրթավարչի սաների արձակ և չափածո գործերը բովանդակող ժողովածուն՝ «Մուզայք Արարատեան», որը նվիրված էր Լազարյաններին. պատրաստվել է 1828-ին, տպագրվել՝ 1829-ին: 13 լեզվով տառատեսակ ունեցող այս մշակութանվեր վայրը մտավոր գործունեության ասպարեզ է բերում նույնքան լեզուներով գրականություն, այդ թվում՝ «Կարգադրությունք կայսերական հովանաւորութեամբ պաշտպանեալ Հայկական ճեմարանին արեւելեան լեզուաց» ժողովածուն, Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը (12 լեզվով), Շուշիի բողոքականների 2 աշխարհաբար գրքույկները, «Աւետարանի զօրութիւն կամ Մին արաբ ծառայի պատմութիւն ...», «Երեք խօսակցութիւնք մին քահանայի մին աշխարհական մարդոյ հետ» (բոլորը՝

1830), «Նկարագիր գաղթականության հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան» (1832) աշխատությունները, Ժան Ռասինի «Գոթողիա» (1834) ողբերգությունը, Ալեքսանդր Խուդաբաշյանի «Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ»-ը (հ. 1, 2, 1838), «Բարձրագոյն հրովարտակք եւ արձանագրութիւնք ...» (հայերեն, ռուսերեն, 1842) ժողովածուն, Մկրտիչ Էմինի «Ընտիր հատուածք քաղեալք ի գրոց նախնի և արդի մատենագրաց հայոց ...» (1848, 1849) դասագիրքը, աշուղ Ագբարի (Ադամ Երևանցի) «Ջանազան երգք»-ը (1855), Մսեր Մսերյանի «Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի» (մաս 1-3, 1856) մատենագիտական-պատմաբանասիրական աշխատությունը, Ստեփանոս Նազարյանցի «Հանդէս նոր հայախօսութեան» (մաս 1-2, 1857) երկը, Սաադիի «Գոլեստան»-ը (ռուսերեն, 1858), Մովսէս Խորենացու «Պատմություն Հայոց»-ը (ռուսերեն, 1858) և այլն, նաև քերականական, ճարտասանական ու այլ ձեռնարկներ:

Ճեմարանավարտ Սերգեյ Գլինկայի «Նկարագիր գաղթականության հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան» (1832) և «Հայ ժողովրդի պատմութեան տեսութիւն» (հ. 1, 2, 1832-1833) աշխատությունները նույնպես լույս են ընծայվել Լազարյանների տպարանում:

1859-1863 թթ. տպարանը վարձակալում է Մկրտիչ Էմինը. հրատարակում է Մովսէս Կաղանկատվացու (1860, Լազարյան եղբայրներն այն ներկայացրել են Ալեքսանդր II ցարին), Մխիթար Այրիվանեցու, Վարդան Արևելցու, Ստեփանոս Օրբելյանի, Ուխտանեսի Պատմությունները, Միքայել Չամչյանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի», «Կանոնք վասն ընդունելոյ ծրիավարժ որդեգիրք ի Լազարեան ճեմարանը արեւելեան լեզուաց» (հայերեն, ռուսերեն, 1860), ինչպես նաև ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, վրացերեն, թուրքերեն, արաբերեն, ղպտիերեն գրքեր: Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասի գերին» ստեղծագործությունները առաջին անգամ թարգմանել է Մկրտիչ Էմինը՝ հեղինակի ողջության օրոք՝ 1834-1835 թթ.): Էմինի գումարով պարբերաբար հրատարակվում է «Էմինեան ազգագրական ժողովածու»-ն¹: Այստեղ են լույս ընծայվում նաև «Հյուսիսսփայլ», «Ճռաքաղ» ու «Համբավաբեր Ռուսիո» պարբերականները:

1863-1866 թթ. տպարանը վարձակալում, իսկ 1866-ին գնում է հրատարակիչ Անատոլի Մամոնտովը: Նա հրատարակում է Ռաֆայել Պատկանյանի «Բանաստեղծությունք»-ը (1864), Սմբատ Շահագիզի «Լևոնի վիշտը» (1865) և այլն: Այդ ժամանակից սկսած՝ կրճատվում է հայերեն հրատարակությունների թիվը, նախապատվությունը տրվում է վրացագիր գրականության հրատարակությանը: Ճեմարանի վարչության որոշմամբ՝ հայերեն առանձին հրատարակություններ լույս են տեսնում մինչև 1917 թվականը: Լազարյան ճեմարանի տպարանին կից գործում է ժամանակի արևելահայ խոշորագույն գրահրատարակչությունը²:

¹ Տե՛ս Դոկուխանյան. 2015, 177-196:

² Տե՛ս Աղայան. 1963, 366-368, Դավթյան. 1964, 40-45, Սաֆարյան. 1988, 224-229, Հայ գրատպություն և գրքարվեստ. հանրագիտարան. 2015, 450:

Մշակութային գործունեությունը

Կրթական հաստատության սաները հակում ունեին ոչ միայն գիտության, այլև արվեստի նկատմամբ: Այդպիսի հակում ունեցող լազարյանական սաներից երկուսը՝ Թեոդորոս Խատամյանը և Սարգիս Տիգրանյանը դառնում են Նոր Նախիջևանի թատրոնի հիմնադիրները (1830-ական թվականների վերջ): Սակայն այդ հակման ամենամեծ դրսևորումը լինում է 1858-ի դեկտեմբերին Լազարյան ճեմարանի ու Մոսկվայի համալսարանի հայ, ինչպես և ռուս ու վրացի ուսանողների մասնակցությամբ հայկական թատրոնի հիմնադրումը: Հիմնադիրներից էին Վ. Շահխաթունյանը, Մ. Տեր-Գրիգորյանը, Ս. Մանդինյանը, Ա. Տիշմիշյանը, Հ. Գուրգենբեկյանը, Ն. Ալադաթյանը, Դ. Երիցփոխյանը, Ս. Շահազիզը, Գ. Քուչարյանը, Ն. Փուլինյանը, Մ. Բուրջալյանը: Ուսանողական թատրոնը բացվում է 1859-ի հունվարի 27-ին Մ. Ստեփանյանի առանձնատան դահլիճում: Ճեմարանում սովորելու տարիներին ուսանողաստեղծ թատրոնի կյանքին աշխուժորեն մասնակցում էր Կ. Ստանիսլավսկին: Ներկայացումները տեղի էին ունենում ճեմարանի դահլիճում, Սեկրետարյովի թատրոնում, նաև մասնավոր տներում: Թատրոնի գոյության միայն առաջին տասնամյա ժամանակահատվածում՝ 1859-1868 թթ., խաղացված շուրջ երեսուն գործերի գերակշիռ մասի հեղինակները ճեմարանական սաներն էին: Այս թատրոնում բեմ են բարձրանում Ս. Վանանդեցու «Արիստակես» («Ներսես Մեծ») ողբերգությունը և Ն. Ալադաթյանի «Վայ իմ կորած հիսուն ոսկին» կատակերգությունը: Բեմադրվում են նաև Ս. Շահազիզի «Կովարար-Կիրակոս», Մ. Տեր-Գրիգորյանի «Ժլատ», Ն. Փուլինյանի «Դալալ Ղադո», Ա. Քիշմիշյանի «Քաղքի ադաթը փոխվի է», Գ. Երիցփոխյանի «Հնարագետ կինը», Գ. Քուչարյանի «Ահա ազգասերները» կենցաղային կատակերգությունները, Մ. Պատկանյանի «Միջի մարդ կամ մոցիքուլ», Գ. Սունդուկյանի «Գիշերվան սաբըր խեր է» վոդևիլները, Ս. Հեքիմյանի «Սամել կամ Կրոնք և տիրասիրություն», Խ. Գալֆայանի «Արշակ Երկրորդ» պատմական ողբերգությունները: Հայ ուսանողները մասնակցում են նաև ռուսերեն բեմադրվող ներկայացումներին, XIX դ. 80-ականներից սկսած գործուն մասնակցում են Պ. Ադամյանի, Գ. Պետրոսյանի, Հ. Աբելյանի, Ա. Վրույրի, Օ. Սևումյանի և այլոց հյուրախաղերի կազմակերպմանը³: Ռուսաստանի խորհրդայնացումից հետո՝ 1918 թ., ճեմարանական թատրոնը դրվում է նորաստեղծ պետության Ժողկոմատի ազգային գործերի և լուսավորության նախարարության իրավասության ներքո: 1919-ին ճեմարանի շրջանավարտ Սուրեն Խաչատրյանի (Արամ Խաչատրյանի մեծ եղբայրը) նախաձեռնությամբ ստեղծվում է դրամատիկական ստուդիա, որը հանգրվանում է Լազարյանների հիմնած հաստատությունում:

Լազարյանների կողմից ստեղծված մտավոր այս կրթօջախը նպաստում է նաև հայոց նոր գրական լեզվի մշակմանը. ծանրակշիռ է նրա դերը աշխարհաբարի ձևավորման ու հաղթանակի գործում⁴:

³ Տե՛ս Թ եր գ ի բ ա շ յ ա ն. 1959, 422–426:

⁴ Տե՛ս Շ ա հ ա զ ի զ. 1944, 24, 26–27, Ղ ա զ ա թ յ ա ն. 1981, 345:

Այլ փաստեր Լազարյան ճեմարանի մասին

Ճեմարանի շենքն ունեցել է գլխավոր և երկու կողմից կառուցված մասնաշենքեր, որտեղ եղել են դասասենյակները, աշակերտների ննջարանները, վերատեսչի և վերակազմների բնակարանները, սեղանատունը, խոհանոցը, բաղնիքը, հիվանդանոցը, քննության դահլիճը, մատենադարանը, դրամադարանը (դրամների և մեդալների թանգարան), պարի ու թատերական խաղերի ընդարձակ սենյակը: Դահլիճում ցուցադրվել են թագավորների, իշխանների, ճեմարանի հիմնադիրների գեղարվեստական նկարներ և դիմաքանդակներ: 1914-ին կրթօջախի պատվավոր հոգաբարձու, հնագետ Սիմոն Աբամելիք-Լազարյանը Մոսկվայում գտնվող մեկ միլիոն ռուբլի արժողությամբ իր շենքը նվիրաբերել է Լազարյան հաստատությանը՝ հօգուտ արտասահմանից եկած հայ երեխաների կրթության ֆոնդի:

Ճեմարանն ունեցել է սեփական կնիք ու պետության կողմից արտոնված հատուկ կրծքանշան շրջանավարտների համար՝ ՊՊ տառերով և ուսանողական հատուկ համազգեստ:

Լազարյան կրթարանը եղել է Մոսկվայի տեսարժան կառույցներից: Տասնամյակներ շարունակ այստեղ են այցելել ռուսական կայսրերը, հայ, ռուս, օտարազգի բազմաթիվ բարձրաստիճան գործիչներ, դիվանագետներ, հոգևորականներ, զինվորականներ և այլ բնագավառների ներկայացուցիչներ: Ռուս նշանավոր գրողներից ճեմարան են այցելել Ա. Գրիբոյեդովը, Ն. Գնեդիչը, Ա. Պուշկինը, Վ. Ժուկովսկին, Ֆ. Վյազեմսկին, Ս. Մուրավյովը, Ն. Գրեչը, Ն. Գոգոլը և շատ ուրիշներ:

Կրթական գործունեության ավարտը և ճեմարանական շենքի ճակատագիրը

1917-ի Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նոր ժամանակներ են գալիս հարյուրամյա հայահիմն կրթօջախի համար, ավելի ճիշտ, մոտենում է նրա վերջի սկիզբը: Ճեմարանի վերակառուցմանն ուղղված գործընթացներ են ծավալվում, որոնց ներգրավված են լինում նաև գիտության ու արվեստի վառ անուններ՝ Նիկողայոս Մառ, Վահան Տերյան, Հովսեփ Օրբելի և այլք:

Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1919 մարտի 4-ի դեկրետով Լազարյան ճեմարանը վերածվում է Հայկական, այնուհետև՝ Առաջավոր Ասիայի, 1920-ին՝ Արևելյան կենդանի լեզուների կենտրոնական, 1921-ին՝ Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի⁵:

Այդ տարիներին ճեմարանի շուրջ ծավալվող իրադարձությունների վերաբերյալ հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում գրական-հասարակական և մշակութային գործիչ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, «Գարուն» գրական-քննադատական ամսանախի խմբագրակազմի անդամ (1910–1912 թթ.) Կարեն (Գերասիմ) Միքայելյանը՝ հայագետ, հասարակական-քաղաքական գործիչ Դավիթ Անանունին (Դավիթ Տեր-Դանիելյան) 1920 թ. հոկտեմբերի 19-ին Մոսկվայից գրած նամակում: Միքայելյանը, խոսելով քաղաքի հայ համայնքի կյանքի մասին, գրում է. «Երկրորդ նշանավոր երևույթը

⁵ Ст'ю Базилянц. 1973.

մեր այստեղի գաղութում Լազարյան ճեմարանի մադրասայի վերածվելն է: Այո՛, չգարմանա, այժմ նա պիտի կոչվի Центральный Институт живых Восточных языков Восток ... (մեկ բառ անհասկանալի է – Ա. Զ.) մի նոր ակտ է սա:

Տերյանի ժամանակ պրոֆ. Մառի մշակած ծրագրի համաձայն փակվեցին միանգամայն անգործնական նախկին специальные курсы ու վերածվեցին Историко-филологический и этнографический переднеазиатский Лазаревский институт-ի, ուր պիտի ուսումնասիրվեին առաջավոր Ասիայի ազգությունների լեզուն, պատմությունն ու գրականությունը, առաջնակարգ տեղ տալով Հայաստանին:

Այնուհետև Մակինցյանի ժամանակ այդ ինստիտուտը դարձավ Армянский институт, պահպանելով իր նախկին переднеазиатский ծրագիրը»⁶:

Ըստ Միքայելյանի՝ գիմնազիական մասը փակվեց ու դրա տեղը բացվեցին նույն դասընթացները՝ այս անգամ միայն հայերեն: Մի ամբողջ տարի գոյություն ունեցավ այդ գիմնազիական մասը, ուր ուսուցչական խորհրդի նախագահ լինելու պատիվն ունեցավ ինքը: Այնուհետև, Հայկական Կոմիսարիատում տեղի ունեցող մի շարք ինտրիգների ու տարածայնության պատճառով, այդ դասընթացները փակվեցին և այդպես էլ փակված մնում են մինչև նամակը գրելու օրը: Լիցեյական մասը հնալով քարշ է տալիս իր գոյությունը⁷: Նամակի հեղինակը գրում է. «Այժմ Бюро Востока-ն գտնելով, որ այդ հաստատությունից ոչ ոք չի օգտվում, Սուլթան-Գալիկի ձեռնեղենությամբ որոշել է փոխել Արևելյան կենդանի լեզուների ճեմարանի: Սեպտեմբերի» 7-ին արդեն դուրս է եկել դեկրետը և ճեմարանի համար նշանակված է արդեն թուրք կոմիսար իր թուրք օգնականով:

Այդ ինստիտուտի խնամքին է հանձնվում մուգեյը, գրադարանը և մյուս հնությունները: Այդ վերակազմությանը առանձին շահագրգռություն են ցույց տալիս ճեմարանի նախկին երկու մասնեղական պրոֆեսորները, որոնք Մառի նոր կանոնադրությունից հետո դասավանդողների ցանկը չմտան, իբրև պատշաճավոր պատրաստություն չունեցող անձինք: Այժմ դրանք ինչ ասել կուզի, որ նոր մադրասի արժանի մոլլաները կլինեն:

Հայ կոմունիստները շնորհիվ ու շվարել են: Այդ կարգադրությունը բեկանելու հույս չունին և երևի ստիպված կլինեն հաշտվել կատարված փաստի հետ: Կասկածներ կան, որ Բյուրոն ճեմարանի, իր տեսակի մեջ միակ, գրադարանը կարող է փոխադրել Բաքու, Ադրբեջանի համալսարանին: Վաղվանից արդեն շինությունը պիտի հանձնվի նոր տերերին»⁸:

Հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություն է պարունակում նաև Կ. Միքայելյանի՝ 1921 թ. հուլիսի 1-ին Մոսկվայից Դ. Անանունին գրած մեկ այլ նամակ. «Այդ հիմնարկությունը (Լազարյան ճեմարանը – Հ. Բ.) մի տարի թրքանալուց և վանդալական ավերածության ենթարկվելուց հետո, նորից դառնում է հայկական: Այս քանի օրս երևի դեկրետով այդ կհայտարարվի: Ողջ շինությունը պիտի կոչվի «Հայաստանի Կուլտուրայի Տուն», ուր բացի դպրոցից և ինստիտուտից, արդեն կենտրոնացած են մի շարք հայկական կուլտուրական հիմնարկություններ»⁹:

⁶ Զ ա ք ա ղ ա ն. 2023, № 1, 231–232:

⁷ Զ ա ք ա ղ ա ն. 2023, № 1, 232:

⁸ Զ ա ք ա ղ ա ն. 2023, № 1, 232:

⁹ Զ ա ք ա ղ ա ն. 2023, № 1, 234:

1921 թ. ճեմարանի նյութական ու մշակութային արժեքները հանձնվում են Հայաստանի խորհրդային հանրապետությանը: Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի 1921-ի հոկտեմբերի որոշմամբ Լազարյան ճեմարանի շենքում հանգրվանում է Խորհրդային Հայաստանի մշակույթի տունը: Այստեղ շուրջ քառորդ դար շարունակում է գործել Ս. Խաչատրյանի ստեղծած Հայկական պետական դրամատիկական ստուդիան, գործում են նաև այլ արվեստուսույց անկյուններ:

Լազարյանական հիմք ունեցող այս ենթակառուցված ժամանակի ընթացքում առնչություն են ունենում հայության մի շարք պանծալի անուններ՝ Արամ Խաչատրյան, Ռուբեն Սիմոնով, Գեորգի Յակուլով և այլն: 1970-ական թվականներին ճեմարանի համալիրը հանձնվում է Խորհրդային Հայաստանի կառավարության տնօրինությանը. ճեմարանի շենքում են տեղակայվում Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի մշտական ներկայացուցչությունը, այստեղ էր գործում նաև ԽՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների պատմության ինստիտուտը: 1987-ին՝ վերականգնողական աշխատանքների ավարտից հետո, ՀԽՍՀ նախարարների խորհրդի որոշմամբ շենքում ստեղծվում է հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան: 1988 թ. հիմնվում է Հայաստանի մշակույթի կենտրոնը, բացվում են հուշապատմական ցուցադրություն և հայկական արվեստի աշխատանքների ցուցահանդես: 1988 թվականից կենտրոնական մասնաշենքում գործել են հայոց լեզվի դասընթացներ, անցկացվել Մոսկվայի Բաումանի շրջանի հայկական դրամատիկական թատրոնի փորձերը: Հայաստանի անկախացումից (1991) հետո այս շենքում է գործում Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը¹⁰:

Ճեմարանի մշակութային արժեքների փոխադրումը Խորհրդային Հայաստան

Թեպետ 1920-ական թվականների սկզբին կար կառավարական որոշում՝ ճեմարանապատկան նյութական ու մշակութային արժեքները հանձնել Խորհրդային Հայաստանին, այդուհանդերձ, Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները չէին պատրաստվում ճեմարանի հարուստ գրադարանը հանձնել ՀԽՍՀ-ին: Գրադարանի փոխադրումը Երևան ձգձգվում էր, քանի որ Մոսկվայում մի շարք հեղինակավոր անձիք դեմ էին դրան. կար ենթադրություն, որ այդ գրադարանից օգտվող չի լինի, և որ ստացողները ունակ չեն լինի այն պահել ու կարգի բերել, ինչի հետևանքով կարող է կորստյան մատնվել մի գրադարան, որի նմանը խորհուրդների անձայրածիր երկրում այդ ժամանակ չկար: Հակառակ ամեն տեսակ խոչընդոտների՝ Խորհրդային կարգերի հաստատումից հետո Լազարյան ճեմարանի գրադարանի հավաքածուն (մոտ 30 հազար միավոր գրականություն) հանձնվում է Խորհրդային Հայաստանին՝ դառնալով նրա մայր՝ Ալեքսանդր Մյասնիկյանի անվան հանրապետական

¹⁰ Լազարյան ճեմարանի մասին մանրամասն տե՛ս Ի գ ն ա տ յ ա ն. 1969, Թ ա - դ է ո ս ե ա ն. 1953, Դ ի լ յ ա ն. 1966, Բ ա գ ի յ ա ն գ. 1986, 61–87, Լազարյան ճեմարան–200. 2017, Մ ս եր ե ա ն գ. 1856, 12–56, Ա ի խ ա ն յ ա ն. 1969, Б а з и я н ц. 1959; А н а н я н. 1998, № 1–2, 63–74; З и н о в ь е в. 1863.

գրադարանի (ներկայիս՝ Հայաստանի ազգային գրադարան) հիմնարար ֆոնդերից մեկը¹¹: Այժմ ճեմարանի գրադարանի հավաքածուից այստեղ պահպանվում է 27620 միավոր գրականություն: Մի մասն էլ պահպանվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, մնացածը՝ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Ճեմարանապատկան հոգևոր գանձարանից հայրենիք է հասնում նաև մի ուրիշ անգին գանձ՝ «Լազարյան ավետարան» անվանումն ստացած IX դարի մագաղաթյա գրչագիր մատյան, որ 1847-ին ճեմարանին էր ընծայել Թեոդոսիայի վաճառական Խաչուկյանը. մեզ հասած հայերեն առաջին ամենահին նկարազարդ և թվագիր ամբողջական ձեռագիրը (887 թ., գրիչ և ծաղկող՝ Սահակ Վանանդեցի): 1925-ին ձեռագիրը Լազարյան հավաքածուի հետ (215 միավոր) տեղափոխվում է Էջմիածին (այժմ՝ Մատենադարան, ձեռ. № 6200)¹²:

Եզրակացություն

Ամենևին տուրք չտալով ազգային սնապարծությանը՝ կարող ենք վստահաբար ասել, որ Լազարյան ճեմարանը երևույթ էր համաշխարհային մանկավարժության պատմության մեջ: Գոնե մեզ հայտնի չէ մեկ այլ օրինակ, երբ որևէ ազգ կրթական հաստատություն է հիմնում օտար երկրում, որը ծառայում է ոչ միայն այդ ազգի, այլև տվյալ պետության, ինչպես նաև այլ ազգերի ներկայացուցիչների կրթական կարիքների բավարարմանը՝ դրան զուգահեռ ծավալելով մշակութային բեղուն գործունեություն: Լազարյանների հիմնադրած կառույցը, ըստ էության, բազմագործառույթ հաստատություն էր՝ կրթական, գիտական, հրատարակչական, արվեստի և այլն: Եվ դա, կարծեք, բնագոյաբար ստացվեց. պետականություն չունեցող ժողովրդի գավակները օգտագործեցին առիթը և կրթության համար նախատեսված հաստատության մեջ զբաղվեցին նաև ազգին շատ անհրաժեշտ այլ ոլորտներով: Այս առումով Լազարյան ճեմարանը նման էր մեր միջնադարյան վանքերին, որոնք, կրոնական հաստատություններ լինելուց զատ, գուցե երբեմն էլ առավել, նաև կրթական, գիտական, գրչագրական, արվեստի ու այլ բնագավառների հաստատություններ էին:

Մի ամբողջ դար ձգվեց ճեմարանի գործունեությունը: Վերջինիս շնորհիվ ժամանակի՝ հոգեմտավոր հետաքրքրություններ ու հակումներ ունեցող հայությունը հաղորդակից եղավ ժամանակի համաշխարհային հոգեմտավոր նվաճումներին: Հայաշունչ կրթօջախը արժանիորեն մեծարվել է «Մայր դպրանոց», «Սերմնարան հայոց դպրոցաց» և այլ բնութագրումներով: Լազարյան ճեմարան երևույթով հերթական անգամ ապացուցվեց, որ հայ ժողովուրդը կրթության ու գիտության նկատմամբ սեր ունեցող ժողովուրդ է, որ հնարավորության դեպքում անգամ օտար երկրում ստեղծում է կրթական զորեղ կենտրոն, որը կրթել է նույնիսկ այլազգիների, ինչն էլ իր հերթին վկայում է, որ հայ ազգը իր մտավոր ձգտումներով ու ներուժով ոչ մի առաջադեմ, լուսավոր ազգի չի զիջում:

¹¹ Տե՛ս Ա դ ա մ յ ա ն. 2018, 24–35:

¹² Տե՛ս Մ ա թ և ո ս յ ա ն. 1973, № 1, 123–132:

Հրաչյա Բալոյան – ք. գ. թ., ՊԲՀ-ի հայերեն բաժնի խմբագիր: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, արևմտահայերեն, հայոց լեզվի պատմություն, հայոց լեզվի համեմատական քերականություն: Հեղինակ է 1 մենագրության և 12 հոդվածի: ORCID: 0009-0009-0758-8752.
hrachyab@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադամյան Ա. 2018, Մոսկվայի Լազարյան ճեմարանի գրադարանը. – «Բանբեր Հայաստանի գրադարանների», Երևան, հ. 1, էջ 24-35 [Adamyan A. 2018, The Library of the Lazarev Institute of Moscow. “Bulletin of Armenian Libraries”, Yerevan, V. 1, pp. 24–35 (in Armenian)]:

Ալիխանյան Ս. Հայ մշակույթի օջախը. – «Սովետական Հայաստան», 22. V. 1969 [Alikhanian S. The Center of Armenian Culture. “Soviet Armenia”, 22. V. 1969 (in Armenian)]:

Աղայան Ղ. 1963, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, Հայպետհրատ, 684 էջ [Aghayan Gh. 1963, Collected Works, V. 4, Yerevan, Haypethrat, 684 p. (in Armenian)]:

Բազիյանց Ա. Պ. 1986, Էջեր Լազարյանների դիվանից (ակնարկներ), Երևան, «Հայաստան» հրատ., 164 էջ [Baziyants A. P. 1986, Pages from the Lazarev Archive (essays). Yerevan, “Hayastan” Publishing House, 164 p. (in Armenian)]:

Դավթյան Հ. 1964, Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը, Երևան, Հայկական ՍՍՌ Ա. Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարան, 142 էջ [Davtyan H. 1964, The Book in Ashkharabar from the beginning of Armenian printing until 1850. Yerevan, Armenian SSR, State Republican Library after A. Myasnikyan, 142 p. (in Armenian)]:

Դիլոյան Վ. Ա. 1966, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դ. երկրորդ կես), Երևան, ԳԱ հրատ, 274 էջ [Diloyan V. A. 1966, From the History of the Socio-Political Activity of the Lazarev Family (second half of the 18th century). Yerevan, Publishing House of the National Academy of Sciences, 274 p. (in Armenian)]:

Դոլուխանյան Ա. 2015, Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը և Մկրտիչ Էմինը. – «Գրականագիտական հանդես» (Երևան), հ. ԺԶ, էջ 177–196 [Dolukhanyan A. 2015, The Lazarev Institute of Oriental Languages and Mkrtich Emin. “Journal of Literary Studies”, Yerevan, V. XVI, pp. 177–196 (in Armenian)]:

Զաքարյան Ա. 2023, Դավիթ Անանուն. Նամակների ընտրանի. – ՊԲՀ, № 1, էջ 207–246 [Zakaryan A. 2023, David Ananun: Selected Letters, HPh], № 1, pp. 207–246 (in Armenian)]:

Թադեոսեան Յ. 1953, Պատմութիւն Լազարեան տոհմի եւ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Վիեննա, Մխիթարեան տպարան, 518 էջ [Tadeosyan Hovsep, 1953, History of the Lazarev Family and the Lazarev Institute of Oriental Languages. Vienna, Mekhitarist Publishing House, 518 p. (in Armenian)]:

Թերզիբաշյան Վ. 1959, Հայ դրամատուրգիայի պատմություն, գիրք 1, Երևան, «Հայպետհրատ», 488 էջ [Terzibashyan V. 1959, History of Armenian Drama. Book 1, Yerevan, “Haypethrat”, 488 p. (in Armenian)]:

Իգնատյան Ա. 1969, Լազարյան ճեմարան, Երևան, ԵՊՀ հրատ., 355 էջ [Ignatyan A. Lazarev Institute, Publishing House of Yerevan State University, 1969, 355 p. (in Armenian)]:

Լազարյան ճեմարան–200. 2017, կազմեց և խմբագրեց Արա Խզմալյանը, Երևան, «Արմավ» հրատ., 64 էջ [Lazarev Institute-200, 2017, compiled and edited by Ara Khzmalyan, Yerevan, “Armar” Publishing House, 64 p. (in Armenian)]:

Հայ գրատպություն և գրքարվեստ. հանրագիտարան. 2015, Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 1120 էջ [Armenian Book Printing and Book Art, Encyclopedia, 2015, Yerevan, “Armenian Encyclopedia” Publishing House, 1120 p. (in Armenian)]:

Ղազարյան Ա. Ղ. 1981, Հայոց լեզվի համառոտ պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 404 էջ [Ghazarian S. Gh. 1981, A Brief History of the Armenian Language. YSU Publishing House, 404 p. (in Armenian)]:

Մաթևոսյան Ա. 1973, Լազարյան ճեմարանի հնագույն ձեռագիրը. – ՊԲՀ, № 1, էջ 123–132 [Mathevosyan A. 1973, The Oldest Manuscript of the Lazarev Institute, HPhJ, № 1, pp. 123–132 (in Armenian)]:

Մսերեանց Մ. 1856, Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի, Մոսկուա, ի տպարանի Արեւելեան լեզուաց Ճեմարանի Տեսրց Լազարեանց, 159 էջ [Mserents Mser, 1856, Memorial of Life and Works of the Noble Lazarev Family. Moscow, Publishing House of the Lazarev Institute of Oriental Languages, 159 p. (in Armenian)]:

Շահազիզ Ե. 1944, Սմբատ Շահազիզի կենսագրությունը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 94 էջ [Shahaziz E., 1944, Biography of Smbat Shahaziz. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 94 p. (in Armenian)]:

Սաֆարյան Ա. Վ. 1988, Հայ գրահրատարակչական գործը Մոսկվայի Լազարյան ճեմարանում (ճեմարանի տպարանի պատմությունից). – ՊԲՀ, № 4, էջ 224–229 [Safaryan A. V. 1988, Armenian publishing activity at the Lazarev Institute of Moscow (from the history of the publishing house of the Institute). HPhJ, № 4, pp. 224–229 (in Armenian)]:

Ананян Ж. А. 1998, Лазаревский институт восточных языков в первой половине XIX в. – ИФЖ, № 1–2, с. 63–74 [Ananyan Zh. A. 1998, The Lazarev Institute of Oriental languages in the first half of the 19th century, HPhJ, № 1–2, pp. 63–74 (in Russian)]:

Базиянц А. П. 1959, Лазаревский институт восточных языков. Москва, Издательство восточной литературы, 56 с. [Baziyants A. P. 1959, The Lazarev Institute of Oriental languages, Moscow, Publishing House of Eastern Literature, 56 p. (in Russian)]:

Базиянц А. П., 1973, Лазаревский институт в истории отечественного востоковедения. Москва, изд. «Наука», 224 с. [Baziyants A. P., 1973, The Lazarev Institute in the history of the Russian Oriental studies, Moscow, “Nauka” Publishing House, 224 p. (in Russian)]:

Зиновьев А. 1863, Исторический очерк Лазаревского института восточных языков. Москва, типография Лазаревского института восточных языков, 149 с. [Zinoviev A., 1863, Historical Outline of the Lazarev Institute of Oriental languages. Moscow, Printing House of the Lazarev Institute of Oriental Languages, 149 p. (in Russian)]:

КРУПНЫЙ ОБРАЗОВАТЕЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЦЕНТР:
ЛАЗАРЕВСКИЙ ИНСТИТУТ

РАЧЬЯ БАЛОЯН

Р е з ю м е

Ключевые слова: Москва, Лазаревы, Лазаревский институт, язык, воспитанник, образование, предмет.

Одним из учреждений, сыгравших значимую роль в армянской действительности, является Лазаревский институт в Москве. Основанный родом Лазаревых (Егизарян) и действовавший в чужой стране, он оказал неоценимую услугу армянскому народу. Учебное заведение стало работать с 1815 года, который официально считается годом его основания. Наряду с общеобразовательными предметами здесь преподавались и иностранные языки. В институте обучались представители разных национальностей. Учебное заведение готовило абитуриентов для поступления в университеты. Его выпускники становились специалистами в самых разных областях: чиновниками различных сфер, учителями армянских светских и духовных школ, служителями Армянской церкви. Институт имел востоковедческую направленность: готовил переводчиков, работников сферы дипломатии, преподавателей восточных языков. Здесь преподавали видные деятели армянской (и не только) культуры. Ряд выпускников института также стали известными ключевыми фигурами в армянской культуре. Учебное заведение относилось к государственным школам первой категории – лицеям. Лазаревский институт занимался также издательской деятельностью. При институте действовал театр. Учебное заведение сыграло определённую роль в формировании и утверждении нового литературного армянского языка (ашхарабара). На протяжении десятилетий его посещали многие известные армянские, русские и иностранные деятели.

В 1917 году институт завершил свою деятельность. В последующие годы здание института предоставлялось различным учреждениям. После обретения Арменией независимости (1991 г.) в стенах бывшего Лазаревского института действует Посольство Республики Армения в РФ.

Библиотека института в начале 1920-х годов была передана Советской Армении и стала одним из основных фондов Республиканской библиотеки имени Александра Мясникяна (ныне Национальная библиотека Армении). Принадлежавшее институту «Лазаревское Евангелие» также было перевезено в Советскую Армению.

Рачья Балоян – к. филол. н., редактор армянского отдела ИФЖ. Научные интересы: современный армянский язык, западноармянский язык, история армянского языка, сравнительная грамматика армянского языка. Автор 1 монографии и 12 статей. ORCID: 0009-0009-0758-8752. hrachyab@gmail.com

LARGE EDUCATIONAL AND CULTURAL CENTER:
LAZAREV INSTITUTE

HRACHYA BALOYAN

Summary

Keywords: Moscow, the Lazarevs, Lazarev Institute, language, student, education, subject.

One of the institutions that played a significant role in Armenian reality is the Lazarev Institute in Moscow. Founded by the Lazarev (Eghiazarian) family and operating in a foreign country, it rendered invaluable service to the Armenian people. The institution opened its doors in 1815, which is officially considered the year of its establishment. Alongside general education subjects, foreign languages were also taught there. Representatives of various nationalities studied at the institute. The educational institution prepared applicants for admission to universities. Its graduates became specialists in a wide range of fields: officials in various areas, teachers in Armenian secular and theological schools, and clergy in the Armenian Church. The institute focused on Oriental studies: it trained translators, specialists in diplomacy, and teachers of Oriental languages. Prominent figures of Armenian (and not only Armenian) culture taught there. A number of graduates from the institute also became distinguished figures in Armenian culture. The educational institution was a state school of the first category, that is, lyceum. The Lazarev Institute carried out publishing activity as well. There was a theater operating at the institute. The educational institution played a certain role in forming and establishing the new literary Armenian language (Ashkharabar). Over the decades, many prominent Armenian, Russian, and foreign figures visited the institute.

In 1917, the institute stopped its activity. In the following years, several institutions were housed in the building of the institute. After Armenia gained its independence in 1991, the building of the former Lazarev Institute was given to the Embassy of the Republic of Armenia in the Russian Federation.

The library of the institute was handed over to the Soviet Armenia in the early 1920s and became one of the basic collections of the Republican Library after Alexander Myasnikyan (now National Library of Armenia). The “Lazarian Gospel”, belonging to the institute, was also moved to the Soviet Armenia.

Hrachya Baloyan – Candidate of Philological Sciences, Editor of the Armenian Section of the “Historical and Philological Journal”. Scientific interests: Modern Armenian, Western Armenian, history of the Armenian language, comparative grammar of Armenian. Author of 1 monograph and 12 articles. ORCID: 0009-0009-0758-8752. hrachyab@gmail.com